

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒԾԵՎԻԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԱՂԱՓՈՒՐԱԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔԸ ԲԱՆԱԿՈՒՄ
(1917 հոկտեմբեր—1918 փետրվար)

Վ. ՓԵՆՏԻՉՅԱՆ

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը, Սովետների Համառուսաստանյան երկրորդ համագումարի կողմից ընդունած հաշտության և հողի մասին դեկրետները ևրկրի ողջ աշխատավորության հետ միասին ցնծությամբ ընդունեցին ավելի քան երեք տարի իմպերիալիստական պատերազմի ծանրությունն ուսերի վրա կրած, շինել հագած բազմամիլիոն աշխատավորները: Ինչպես Արևմտյան և Հյուսիսային ճակատներում, Կովկասյան բանակի ճակատային ու թիկունքային զորամասերի, կայազորների զինվորները ողջունելով Պետրոգրադի հերոսական պրոլետարիատի և հեղափոխական բանակի ելույթը, ընդունած բանաձևերում երդվում էին կրծքով պաշտպանել սովետական իշխանությունը և պահանջում տեղերում իշխանության անցումը սովետներին¹:

ՌՍԴԲԿ(բ) Կովկասյան երկրային կոմիտեի, Կովկասյան ճակատի զինվորական կազմակերպությունների բյուրոյի և Թիֆլիսի կոմիտեի կողմից Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի կապակցությամբ Կովկասյան բանակի զինվորներին ուղղված դիմումի մեջ ասվում է. «Ընկեր զինվորներ, հասել է բանվորա-գյուղացիության հեղափոխության մեծ ժամը: Երկաթե շարքերով ելեք պաշտպանելու ձեր հեղափոխությունը: Մերկացրեք հակահեղափոխականներին: Վճռական գոտեմարտն սկսվել է: Հաղթանակը տառապյալ ժողովրդի մեծամասնության կողմն է»²:

Երկրամասում համաձայնողական կուսակցությունների, շահագործողական դասակարգերի կատաղի դիմադրությունը ճնշելու ընդունակ ուժ էր նաև աշխատավորական լայն զանգվածների առավել գիտակից, կազմակերպված մասը, որը հիմնականում կենտրոնացված էր բանակում, որտեղ և գնալով մեծանում էր բոլշևիկների ազդեցությունը: Անհրաժեշտ էր ամրապնդել այդ ազդեցությունը, խլել մանրբուրժուական տատանումներ հանդես բերող, քաղաքականապես դեռևս չհասունացած զինվորներին էսէնների, մենշևիկների և դաշնակների ազդեցությունից, համախմբել նրանց բոլշևիկյան լոզունգների շուրջը և բանակի վրա հենվելով հասնել տեղում սովետական կարգերի հաստատմանը: Տվյալ դեպքում երկրամասի բոլշևիկները ղեկավարվում էին Վ. Ի. Լենինի այն հայտնի դրույթով, որ, «եթե հեղափոխությունը մասսայական չդառնա և իր կողմը չգրավի զորքը, ապա խոսք էլ չի կարող լինել լուրջ սլայքարի մասին»³:

¹ Տե՛ս երկրամասի բոլշևիկյան մամուլի 1917 թ. նոյեմբեր, դեկտեմբեր, 1918 թ. հունվար, փետրվար ամիսների նյութերը: Կովկասյան բանակում հեղափոխական շարժման, բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության հարցերի հանգամանակից քննարկումը տե՛ս Ա. Ս. Տեկլով, *Революционная деятельность большевистских организаций на Кавказском фронте (1914—1917 гг.)*, Тбилиси, 1969, ձ. Ս. Մելիքյան, *Հոկտեմբերյան հեղափոխության աշխատանքը Կովկասյան բանակում*, Եր. 1969 թ. մենագրություններում: Մենք Կովկասյան բանակի հարցերը քննարկում ենք մեզ հետաքրքրող «Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների գաղափարական աշխատանքը 1917—1921 թթ.» պրոբլեմի կապակցությամբ:

² «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», 1960, էջ 113:

³ Վ. Ի. Լենին, *Երկեր*, հ. 11, էջ 203:

Հավատարիմ մնալով լենինյան դրույթներին և ղեկավարվելով կուսակցության VI համագումարի որոշումներով, բանակում տարվող աշխատանքներին անդրադարձավ Կովկասի բոլշևիկների երկրային առաջին համագումարը, որին մասնակցում էին մեծ թվով ղինվորական ներկայացուցիչներ:

«Կավկասյան ռաբոշի» թերթը տպագրել էր համագումարի պատգամավորներ Սկարյուկինի (Կարսի բոլշևիկյան կազմակերպությունից), Կիասովի (Սարիղամիշ), Արվելաձեի (Ալեքսանդրապոլ), Հովսեփյանի (Տրապիզոն), Աթաբեկյանի, Կուզնեցովի (Թիֆլիս), Կորգանովի (Ռազմաճակատ), Կիվկուցանի (գեղացրային գունդ) և մյուս պատգամավորների ելույթները: «Մինչև Կոռնիլովյան դավադրությունը,— իր ելույթում ասաց Սկարյուկինը,— իշխում էին էսէնները, ներկայումս տրամադրությունները բոլշևիկների օգտին է: Կուսակցական թերթերից ստացվում է «Կավկասյան ռաբոշի», «Ռեձոլյուցի» և տարածվում է մեծ քանակությամբ կուսակցական բոլշևիկյան գրականություն»⁴: «Այժմ մեր կուսակցությունը,— նշում էր Ա. Աթաբեկյանը,— բայլ առ բայլ նվաճում է մասսաների համահրանքը և, իր շուրջը համախմբելով բանվորներին ու զինվորներին, նշանակալից դեր է սկսում խաղալ հաստատուն կերպով վերելք ապրող հեղափոխական շարժման ղեկավարման մեջ»⁵:

Ձինվորների տրամադրությունների փոփոխման մասին համագումարում արտահայտվեց Գ. Կորգանովը: «Ձինվորները,— ասում էր Կորգանովը,— իրենց դժգոհությունն են արտահայտում երկրային սովետի գործունեությունից: Զորամասերը պահանջում են բանակային համագումարի հրավիրում, նրանք բացահայտորեն չեն վստահում էսէլա-մենշևիկյան երկրային սովետին»⁶:

Համագումարը բոլշևիկյան կազմակերպությունների հիմնական խնդիրն է համարում առաջիկայում ևս «գերազանցապես գյուղացիական շքավորությունից և բանվորներից կազմված զինվորական միջավայրում հեղափոխական սոցիալիզմի նույն սկզբունքների և գաղափարների պրոպագանդան ու տարածումը, հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի տակտիկական լոզունգների, ծրագրային պահանջների պարզաբանումը»⁷:

Համագումարի կողմից ընդունած որոշումները օգնեցին Կովկասի և Հայաստանի բոլշևիկյան կազմակերպություններին ավելի նպատակասլաց դարձնելու իրենց քաղաքական-գաղափարական աշխատանքը աշխատավորության ու զինվորների շրջանում, այդ նպատակին ծառայեցնելով բոլշևիկյան մամուլը և բանավոր խոսքը: Տեղական կուսակցական կազմակերպություններին, ինչպես միշտ, մեծ օգնություն էին ցույց տալիս կուսակցության Կենտրոնական կոմիտեն, ՌՍԴԲԿ(բ) Կովկասյան Երկրային կոմիտեն, Թիֆլիսի և Բաքվի կուսակցական կազմակերպությունները:

Համագումարի աշխատանքի ավարտից հետո պատգամավորները ցրվեցին և տեղեկում լայն քաղաքական աշխատանք ծավալեցին աշխատավորության շրջանում և բանակում երկրային համագումարի որոշումները պարզաբանելու և իրականացնելու ուղղությամբ: Ժողովներում ու միտինգներում նրանք մերկացնում էին ժամանակավոր կառավարության և համաձայնողական կուսակցությունների հակահեղափոխական և դավաճանական քաղաքականությունը և կոչ էին անում բանվորներին և զինվորներին՝ իրենց ուժերը համախմբել և պատրաստվել սոցիալիստական հեղափոխության:

Այսպես, հոկտեմբերի 7-ին Պ. Արվելաձեի ուղեկցությամբ Ալեքսանդրապոլ է գալիս ՌՍԴԲԿ(բ) Կենտկոմի անդամ Ստ. Շահումյանը: Տեղի աշխատավորության և կայազորի զինվորների առջև նրա պարզ և բովանդակալից՝ ելույթները հանգեցրին նրան, որ, ինչպես հեռագրում էր Ստ. Շահումյանը «Ռաբոշի պոտ» թերթին, «քսան հազարանոց կայազորը ամբողջապես բոլշևիկյան է»⁸:

Ալեքսանդրապոլի կայազորի զինվորների շրջանում հեղափոխական քաղաքական աշխատանք էին կատարում ճանաչված բոլշևիկներ Պ. Արվելաձե, Բ. Ղարիբջանյանը, Գ. Հանես-օղլյանը և ուրիշներ: Ալեքսանդրապոլի և մոտակա շրջանների աշխատավորության, ինչպես նաև կայազորի զինվորների քաղաքական հայացքների ձևավորման գործում լուրջ դեր են խաղացել «Պրավդա», «Կավկասյան ռաբոշի», «Բանվորի կոիվը», «Նոր կյանք» և «Պրավդա ժիզնի» թերթերը: Քաղաքի բոլշևիկները զինվորների շրջանում հաճախակի կազմակերպում էին միտինգներ ու ժողովներ, որտեղ պարզաբանում էին ընթացիկ մոմենտի, Հոկտեմբերյան հեղափոխության, սովետական կառավարության քաղաքականության էական հարցերը:

⁴ «Կավկասյան ռաբոշի», 1917, № 169, 10 հոկտեմբերի:

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

⁷ «Резолюция Кавказского Краевого съезда РСДРП(б)», Тифлис, 1917, с. 12.

⁸ Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, Եր., 1957, էջ 521:

«Կապիկազսկի ռաբոչի» թերթը զետեղել էր հորված ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի բուլճերիկյան կազմակերպության նախաձեռնությամբ կազմակերպած միտինգի մասին: Կայազորի 5000 զինվորների և 39-րդ դիվիզիայի զինվորների մասնակցությամբ տեղի ունեցած այդ միտինգում ղեկուցումներով հանդես են եկել Պ. Արվելաձեն, Բ. Ղարիբջանյանը և ուրիշներ: Չնայած Ալեքսանդրապոլի մենշևիկների լիզեր Ասրիբեկովի և քաղաքագլուխ Խատիսովի հակաբուլճերիկյան և ամբողջավարակաճան ելույթներին, միաձայն ընդունված բանաձևում ասվում է, որ «զինվորները Կովկասում բացի սովետական իշխանությունից այլ իշխանություն չեն ճանաչում և պահանջում են երկրային բանակային համագումարի հրավիրում և Երկրային սովետի վերընտրություններ»⁹:

Սարիղամիշի կայազորի զինվորների շրջանում արդյունավետ աշխատանք էին կատարում Կիասովը (Կիասաշվիլի), Ստ. Ալավերդյանը, Շեբոլդաևը և ուրիշներ:

Հոկտեմբերյան պատմական իրադարձությունների հեղափոխականացնող ազդեցության տակ, ինչպես նաև տեղի բուլճերիկների ամենօրյա ակտիվ ու համառ աշխատանքի շնորհիվ Սարիղամիշի կայազորը արագորեն բուլճերիկանում էր: Այսպես, կթե օգոստոս-սեպտեմբեր ամիսներին կայազորում հաշվվում էր 300-ից մի փոքր ավելի բուլճերիկ¹⁰, ապա նույնմբերի կեսերին բուլճերիկների թիվը հասնում է 1500-ի¹¹:

Կայազորի զինվորներին բուլճերիկյան լուսուղիների շուրջը համախմբելու գործում մեծ դեր է խաղացել ՌՍԴԲԿ(բ) Սարիղամիշի կազմակերպության հրատարակած «Սոցիալ-դեմոկրատ» թերթը:

Մերկացնելով երկրի և հեղափոխության համար ժամանակավոր կառավարության կործանարար քաղաքականությունը՝ Ստ. Ալավերդյանը «Սոցիալ-դեմոկրատ» թերթում գրում էր. «Եթե երեկ մենք կարող էինք խոսել երկրի ծանր դրության մասին, ապա այսօր նա գտնվում է կործանման եզրին: Հարկավոր է ուժեղ և հեղափոխական մի իշխանություն, որը կարողանա փրկել երկիրը լրիվ քայքայումից: Այդպիսի իշխանությունը բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների սովետի ներկայացուցիչների իշխանությունն է»¹²:

Սարիղամիշի աշխատավորությունը, 30-հազարանոց կայազորը առաջիններից էին երկրամասում, որոնք ողջունեցին Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը և ընդունած բանաձևվերում, պաշտպանելով կենսին գլխավորությամբ ստեղծված սովետական կառավարությանը, պահանջում էին տեղերում սովետական կարգերի հաստատումը:

Պատմական այդ մեծ շրջագործի օրերին Սարիղամիշի բուլճերիկների ղեկավար Ստ. Ալավերդյանը գրում էր. «Մենք կանգնած ենք համաշխարհային կարևորություն ունեցող պատմական փաստի առջև, մի փաստ, որի նմանը չի հիշում մարդկության պատմությունը: Մեր մեծ ուսուցչի «Բանվորների ազատագրումը հենց իրենց բանվորների ձեռքի գործն է» մեծ նշանաբանը վերջապես դարձավ ներկա օրերի ողուսական պրոլետարիատի և շքավոր գյուղացիության պրակտիկ նշանաբանը»¹³:

1918 թ. հունվարին Սարիղամիշում ստեղծվում է ռազմա-հեղափոխական կոմիտե, որը հենվելով հեղափոխականորեն տրամադրված զորամասերի վրա, իշխանությունը տեղում վերցնում է իր ձեռքը: Սարիղամիշի կայազորը իրեն հայտարարում է սովետական հեղափոխական բանակ և իրեն դնում ժողովրդական կոմիսարների սովետի տրամադրության տակ¹⁴:

Կարսի աշխատավորության և կայազորի զինվորների շրջանում քաղաքական-բացատրական մեծ աշխատանք են տանում Ս. Ակարյուկինը, Բ. Բորյանը և շատ այլ բուլճերիկներ: Ժողովներում ու միտինգներում նրանք մերկացնում էին հակահեղափոխական և համաձայնողական կուսակցությունների ուսուցիչներին, հակաժողովրդական էությունը, պարզաբանում բուլճերիկյան կուսակցության ազդարարին, ազգային քաղաքականությունը, ընթացիկ մոմենտի և զինվորներին հուզող ու հետաքրքրող շատ այլ հարցեր: Այսպես, նույնմբերի 3-ին Կարսի կայազորի զինվորները, լսելով Բ. Բորյանի «Ընթացիկ մոմենտը և բուլճերիկների տակտիկան» թեմայով կեկուցումը, ողջու-

⁹ «Կապիկազսկի ռաբոչի», 1917, № 212, 30 նոյեմբերի, տե՛ս նաև «Ռաբոչի ի սոլդատ», 1917, № 63, 23 նոյեմբերի:

¹⁰ Տե՛ս Հ. Ս. Մելիքյան, «Հոկտեմբերյան հեղափոխությունը և Կովկասյան բանակը», Եր., 1970, էջ 85:

¹¹ «Կապիկազսկի ռաբոչի», 1917, № 208, 25 նոյեմբերի:

¹² «Սոցիալ-դեմոկրատ», 1917, № 2, 8 հոկտեմբերի:

¹³ «Կապիկազսկի ռաբոչի», 1917, № 202, 17 նոյեմբերի:

¹⁴ «Борьба за победу Советской власти в Грузии», Тбилиси, 1958, с. 179.

նեցին Պետրոգրադի սովետի և կայազորի ելույթը և վճռականորեն հայտարարեցին, որ իրենք ճանաչում են միայն սովետական իշխանությունը¹⁵:

Զինվորների և աշխատավորների շրջանում բռնկվեցին կատարած աշխատանքների հաջողությունների մասին և վկայում հայտնի բռնկվեց Զա. Լավրենտևի (Լ. Քարթվելավալի) 1917 թ. հոկտեմբերի 14-ի զեկուցագիրը կուսակցության Կենտկոմին, որտեղ ասվում է. «Կայազորի տրամադրությունը շեշտակիորեն փոխվել է հօգուտ մեզ: «Լենինը հողի մասին» հրատարակության նկատմամբ խիստ մեծ պահանջ կա... Զինվորները խնդրում են ավելի հաճախակի հավաքել իրենց... Վստահությունը դեպի մեր կուսակցությունը աճում է»¹⁶:

Թիֆլիսի կայազորի զինվորներին հեղափոխության կողմը գրավելու համար բռնկվեցին կազմակերպությունները օգտագործում էին պրոպագանդայի և ազիտացիայի բոլոր միջոցները, մամուլը, միտինգներն ու ժողովները: «Ալեքսանդրյան այգին,—նշում էր Աթաբեկյանը,—մեզ համար դարձել էր ամբիոն, որտեղից մենք կարող էինք առավտոց մինչև երեկո բազմահազար զինվորական մասսայի առաջ քարոզել մեր գաղափարները»¹⁷: Թերթը միաժամանակ հաղորդում էր, որ Ապրիլյան կոնֆերանսի ընդունած բանաձևերը տպագրվել են տասը հազար օրինակ տպաքանակով և տարածվել զինվորների և բանվորների շրջանում¹⁸:

Երկրամասի հակահեղափոխական ուժերը աշխատում էին բանակը հեռու պահել հեղափոխության հորձանուտից, երկրի քաղաքական կյանքից, ապակողմնորոշման, գաղափարական դիվերսիայի, շանտաժի, հաբեկման միջոցով զինվորին վերածել հյու հնազանդ գործիքի՝ իրենց նեղ դասակարգային շահադիտական նպատակներին հասնելու համար: Դեռևս 1917 թ. ապրիլի 19-ին Բանվորների և զինվորների դեպուտատների էսէռա-մենշևիկյան Սովետի Թիֆլիսի Գործադիր կոմիտեն որոշում ընդունեց թույլ չտալ 40000 օրինակ «Պրավդա» թերթի առաքումը ուղղաճանկատ¹⁹:

Հետզհետե կորցնելով ազդեցությունը բանակում՝ համաձայնողական կուսակցությունները բլոկի մեջ մտնելով ազգային բուրժուազիայի, ազգային խորհուրդների հետ՝ ձեռնամուխ ևղան ազգային գործաձևերի, «Կարմիր զվարդիայի» կազմակերպմանը, որոնց օգնությամբ էլ ձնշում էին երկրամասում ծավալվող հեղափոխական շարժումները:

Ի հակադեռ Թիֆլիսի և Երկրային սովետի հակահեղափոխական գործունեության, Թիֆլիսի կայազորի 36 զորամասերի ներկայացուցիչներ բռնկվեցին նախաձեռնությանը ու ղեկավարությանը ստեղծում են մի հեղափոխական օրգան՝ պատգամավորական ժողով անվան տակ, որը փաստորեն Զինվորների դեպուտատների բռնկվեցին սովետի ֆունկցիաներն էր իրականացնում և իրեն, մինչև սովետի վերընտրությունը, հայտարարեց զինվորական մասսաների շահերը պաշտպանող միակ իրավազոր կազմակերպությունը: Պատգամավորական ժողովն իր առջև խնդիր էր դրել Թիֆլիսի սովետից պահանջել իրականացնելու Թիֆլիսի սովետի զինվորական սեկցիայի վերընտրությունները և անգին զորամասերի զինումը²⁰: «Պատգամավորական ժողովը ինքնակոչ կազմակերպություն չէ, այլ դեմոկրատական կազմակերպություն,—գրում էր «Կավկասիի ուրբուխ» թերթը,— Նա կանգնած է Պետրոգրադի Բանվորների և զինվորների դեպուտատների սովետի պատգամավորական վրա ու պատրաստ է նրան ցույց տալու բարոյական, իսկ եթե պահանջվի՝ նաև նյութական օգնություն»²¹: Պատգամավորական ժողովը լայն մասսայականություն էր վայելում Թիֆլիսի կայազորի զինվորական շրջանում, որոնց թիվը անցնում էր 80000-ից և ընդգրկում էր ավելի քան 70 զինվորական միավոր²²:

Նոյեմբերի 4-ին պատգամավորական ժողովը նկատի ունենալով, որ «Երկրային սովետի ներկայիս պաշտպանողական կազմը... չի արտահայտում բանակի հեղափոխական կամքը, որոշում է ընդունում պահանջել երկրային սովետից անհապաղ Կովկասյան բանակի Երկրային

¹⁵ «Կավկասիի ուրբուխ», 1917, № 198, 12 նոյեմբերի:

¹⁶ «Переписка Секретариата ЦК РСДРП(б) с местными партийными организациями», т. I, М., 1957, с. 37. Տե՛ս նաև «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», փաստաթղթերի ժողովածու, Եր., 1960, էջ 94—95:

¹⁷ «Կավկասիի ուրբուխ», 1917, № 169, 10 հոկտեմբերի:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ С. Е. Сеф. «Революция 1917 года в Закавказье». Документы и материалы. Тифлис, 1927, с. 23.

²⁰ Տե՛ս «Կավկասիի ուրբուխ», 1917, № 188, 1 նոյեմբերի:

²¹ «Կավկասիի ուրբուխ», 1917, № 193, 7 նոյեմբերի:

²² Տե՛ս Ա. Միկոյան, Պաթարի ուղիով, Եր., 1972, էջ 158:

Համագումարի հրավիրումը»²³, Վերջինիս հրավիրման անհրաժեշտության մասին բանաձև է ընդունվել դեռևս բոլշևիկները երկրային առաջին համագումարում, որտեղ միաժամանակ նախագահությանը էր, որ եթե Կովկասյան բանակի երկրային սովետը այդ պահանջը չկատարի, ապա «...Երկրային սովետից անկախ զորամասերի կուսակցական կազմակերպությունները պետք է իսկույն կեթ ազիտացիա ծավալեն բանակային համագումար հրավիրելու մասին»²⁴։ «Կավկազսկի ութուշի» թերթը հաղորդում էր պատգամավորական ժողովի նախաձեռնությունը կազմակերպված Թիֆլիսի կոլյակորի բազմահազարանոց միտինգի մասին, որտեղ ընդունված բանաձևում ողջունելով Պետրոգրադի հեղափոխական բանակին, իր «պատրաստակամությունն է հայտնում պաշտպանել նրա բոլոր միջոցառումները, լուծելու հեղափոխության բոլոր հարցերը»²⁵։

Հենվելով Կովկասյան բանակի հեղափոխական հնարավորությունների և կամքի վրա՝ Ստ. Շահումյանը նոյեմբերի 23-ին հեռագրում է Կենտրոնական կոմիտե՝ Վ. Ի. Լենինին. «Կայազորի մեծ մասը մեր կողմն է։ Մենք կարող ենք բանակի օգնությամբ կոմիսարիատին ստիպել ճանաչելու ժողովրդական կոմիսարների սովետի իշխանությունը»²⁶։

Էսէռա-մենշևիկյան բուլդ աշխատում էր եթե ոչ ձախողել, ապա որքան հնարավոր է ձգձգել համագումարի հրավիրումը, հուսալով, որ իրենց կհաջողվի «բանակը բուժել բոլշևիզմից»²⁷։

Կովկասյան բանակային երկրորդ համագումարը իր աշխատանքներն սկսեց Թիֆլիսում 1917 թ. դեկտեմբերի 10-ին։ Համագումարում «ամենախոշոր ֆրակցիան բոլշևիկների ֆրակցիան էր, որն ուներ մինչև 160 մարդ»²⁸։ Սրանից կես տարի առաջ առաջին համագումարում, — ասում էր Ստ. Շահումյանը, — բոլշևիկները իրենցից ներկայացնում էին մի փոքրիկ խմբակ, որին չէին նկատում, որին հաշվի չէին առնում»²⁹։

Համագումարի աշխատանքներին մասնակցում էին նաև դաշնակցության ներկայացուցիչները։ «Չնկատելով», որ հեղափոխական տրամադրությունները բանակում ընդգրկել են զինվորական լայն մասսաներին, որոնք իրենց զայրույթն են արտահայտում Անդրկովկասի կոմիսարիատի և համաձայնողական կուսակցությունների հակահեղափոխական, դավաճանական քաղաքականության դեմ և պատրաստ են բոլշևիկների առաջին իսկ կողմը հանդես գալու հանուն սովետների իշխանության՝ դաշնակ Արզումանովը համագումարում պնդում էր, որ իբր զինվորները հեռու են երկրում հակահեղափոխական ուժերի դեմ պայքարելու զուլափարից, ինչպես նաև հեղափոխության հետագա զարգացումից և խորացումից։ Իր ելույթում դաշնակցության ներկայացուցիչը միաժամանակ, անշնորհ կերպով փորձ էր անում ուսմամբ ճակատի մերկացման մեղքը բարդել բոլշևիկների վրա»³⁰։

Համագումարի հրավիրման կապակցությամբ ՌՄԴԲ(բ) Կովկասյան զինվորական կազմակերպությունների ժամանակավոր բյուրոյի կողմից զինվորներին ուղղված կոչում նշվում էր, որ «ճակատի և երկրամասի զինվորական միավորումների մեր կուսակցության անդամների համագումարը հիմք կտեղծի բանակում ամուր կուսակցական կազմակերպության, որը հզոր հենարան կհանդիսանա հեղափոխության համար»³¹։

Կովկասյան բանակային երկրորդ համագումարի նախօրյակին «Կավկազսկի ութուշի» թերթում տպագրվել էր կուսակցության Կենտկոմի կողմը՝ ուղղված Կովկասի բանակի զինվորներին. «Ենկտեմբերի 10-ին Կովկասյան բանակի երկրորդ բանակային համագումարն է, — ասվում էր կոչի մեջ։ — Ընտրեցեք բոլշևիկներին, որոնք ձեզ տվել են զինադադար, հող և բանվոր-գյուղացիական կոոպերատիվություն։ Ամբողջ հեղափոխական Ռուսաստանի հետ միասին պաշտպանեցեք ժողովրդական կոմիսարների սովետին, ընդդեմ Կալեդինի, Կառաուլովի, Անդրկովկասյան կոմիսարիատի»³²։

23 «Борьба за победу Советской власти в Грузии», Тбилиси, 1958, с. 137.

24 «Резолюция Кавказского Краевого съезда РСДРП(б)», Тифлис, 1917, с. 6.

25 «Կավկազսկի ութուշի», 1917, № 206, 23 նոյեմբերի։

26 Ա. Միկոյան, «Պայքարի ուղիով», Եր., 1972, էջ 160—161։

27 С. Е. Сеф. «Революция 1917 года в Закавказье». Документы и материалы. Тифлис, 1927, с. 346.

28 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 45։

29 Նույն տեղը, էջ 45։

30 «Молот», № 60, 1917, 23 դեկտեմբերի։

31 «Борьба за победу Советской власти в Грузии», Тбилиси, 1958, с. 115.

32 «Կավկազսկի ութուշի», 1917, № 208, 25 նոյեմբերի։

Բանակային համագումարի հրավիրման կապակցությամբ Կովկասյան բանակի զինվորների ներքին հիմնք նաև ՌՍԴԲԿ(բ) Կովկասյան երկրային կոմիտեին. «Եթե դուք, Կովկասի զինվորները ուզում եք կործանումից փրկել հեղափոխական Ռուսաստանը, պետք է պաշտպանեք ձեր բանվորագյուղացիական կառավարությունը և նրանի գլխավորությամբ և օգնեք ժողովրդական կոմիտեի սովետին Կովկասում ևս կիրառելու այն բոլոր հեղափոխական դեմոկրատական միջոցառումները, որ նրանք արդեն կիրառել են Ռուսաստանում»³³:

Համագումարում բոլշևիկների աշխատանքի հիմքում ընկած էին այն բազմաթիվ նամակ-նակագները, որ ստանում էր «Կավկասյան ռաբոչի» թերթը ռազմաճակատի և թիկունքի զինվորներից: Թերթի № 219-ում տպագրված Սարիզամիշի կայազորի զինվորների նակագում, արտահայտելով ողջ կայազորի զինվորների կամքը՝ պահանջվում էր «անպայմանորեն ճանաչել որպես միակ իշխանություն ժողովրդական կոմիտեի սովետին, ցրել Անդրկովկասի հակահեղափոխական կոմիտեի ստեղծումը և թիֆլիսում ստեղծել ժողովրդական կոմիտեի սովետի ներկայացուցչություն, որը ներկայացնելով տեղական բանվորների, զինվորների և գյուղացիների սովետը, կղեկավարի Անդրկովկասի գործերը»³⁴:

Ընդառաջ գնալով Կովկասյան բանակի բազմահազար զինվորների հեղափոխական տրամադրություններին, ընթացիկ մոմենտի մասին համագումարի ընդունած բանաձևում ասվում էր. «Մենք չենք կարող ճանաչել Անդրկովկասյան իշխանությունը՝ հանձինս կոմիտեի ստեղծումը և պահանջում ենք Անդրկովկասում սովետական իշխանության հաստատումը: Իշխանությունը տեղերում պետք է գտնվի բանվորների, զինվորների և գյուղացիների տեղական դեպուտատների սովետների ձեռքին»³⁵:

Արտահայտելով Կովկասյան բանակի զինվորների հեղափոխական կամքն ու տրամադրությունները՝ համագումարը բոլոր քննարկված հարցերի վերաբերյալ ընդունեց բոլշևիկյան բանաձևեր: Դա Կովկասյան բանակի բոլշևիկացի միայլուն վկայությունն էր, բոլշևիկյան դադափարների կատարյալ հաղթանակը: Դա միաժամանակ հանդիսացավ էսեռա-մենշևիկյան դաշնակցական բլոկի, Կովկասյան մենշևիզմի քաղաքական-գաղափարական կրախը:

Կովկասյան բանակային երկրորդ համագումարում բոլշևիկների տարած փայլուն հաղթանակի կապակցությամբ «Կավկասյան ռաբոչի» թերթը գրում էր. «Բանակի շքանարիտ-հեղափոխական մասը, հանձինս բոլշևիկների և ձախ սոցիալիստ-հեղափոխականների, հաղթանակի անունով ընդգեմ բուն բուրժուական, պաշտպանողական կուսակցությունների՝ մենշևիկների, աջ էսէռների, դաշնակցականների, կազակների և ուկրաինացիների բլոկի դեմ: Այսուհետև բանվորագյուղացիական հեղափոխությունը հանձինս Կովկասյան բանակի ձեռք է բերում հուսալի հենարան»³⁶:

Համագումարում Կովկասյան բանակի երկրային սովետի նախագահ ընտրվեց համալսարանի լենինյան Գ. Կորգանովը, քարտուղար՝ Ի. Մալիգինը:

Բանակային երկրորդ համագումարում կրած պարտությունը շփոթ և կատաղություն առաջ բերեց համաձայնողականների ու հակահեղափոխականների լազերում: Համագումարի կողմից ընդունած որոշումները բանակից թաքցնելու նպատակով արգելվում էր բոլշևիկյան թերթերի առաքումը ճակատ, խեղաթյուրում, կեղծում էին ընտրությունների արդյունքները³⁷:

Էսէռա-մենշևիկյան-դաշնակցական բլոկը դեմագոգիկ կերպով հայտարարում էր, որ իբր «բոլշևիկները առաջ քաշելով «Ամբողջ իշխանությունը սովետներին» լոզունգը, այժմ «հրաժարվում են համատեղ աշխատել սովետներում», այլ կերպ ասած՝ «հրաժարվում են սովետական իշխանությունից»³⁸:

«Կավկասյան ռաբոչի» թերթը տպագրել էր բանակային համագումարում նորընտիր Ծրկրային սովետի ողջունը ուղղված Վ. Ի. Լենինին, որտեղ ասվում է. «...նստորեն հենվելով համագումարի ընդունած բանաձևի վրա, որը ճանաչում է սովետական իշխանությունը, հողի, հաշտության և բանվորական վերահսկողության վերաբերյալ դեկրետները, Կովկասյան բանակի երկրային սովետը իրեն հայտարարում է գերագույն իշխանություն ռազմական կառավարման

³³ «Բակինսկի ռաբոչի», 1917, № 95, 30 նոյեմբերի:

³⁴ «Կավկասյան ռաբոչի», 1917, № 219, 13 դեկտեմբերի:

³⁵ Газ. «Известия Бакинского Совета», 1918, № 1, 3 января.

³⁶ «Կավկասյան ռաբոչի», 1917, № 228, 23 դեկտեմբերի:

³⁷ «Բակինսկի ռաբոչի», 1917, № 116, 30 դեկտեմբերի:

³⁸ С. Е. Сеф. Революция 1917 года в Закавказье. Документы и материалы. Тифлис, 1917, с. 361.

ուրտում և խնդրում է բոլոր կարգադրությունները ուղարկել Կովկասյան բանակի երկրային սովետին, որպես բանակի իրավադոր օրգանի»³⁹,

Բոլշևիկյան մամուլը իր էջերում զետեղեց նաև Կովկասյան բանակի նորընտիր սովետի կողմը՝ ուղղված զինվորներին, որի վերջում ասվում է. «Ընկեր զինվորներ. ձեր ձեռքումն է ուսական մեծ հեղափոխության բախտը, ձեր գիտակցությունից և կազմակերպվածությունից է կախված բանվորների ու գյուղացիների բոլոր պահանջների իրականացումը»⁴⁰:

Ի մի բերելով համագումարի աշխատանքի արդյունքները՝ Ստ. Շահումյանը գրում է. «Կովկասյան բանակը հայտարարեց, որ նա իր համար միակ իշխանություն է ճանաչում բանվորա-գյուղացիական կառավարության իշխանությունը: Դեռ ավելին. նա հայտարարեց, որ Անդրկովկասյան կոմիտարիատը իր համար գոյություն չունի և որ Կովկասում զինվորական սֆերայում գերագույն իշխանություն է հանդիսանում բանակի Երկրային սովետը»⁴¹:

«Պրոլետարական հեղափոխականները,—գրել է Վ. Ի. Լենինը,—իրենց ամբողջ ուղադրությունը ուղղում էին... դեպի այն, որ բանակը հեղափոխականացնեն, նրան օգտագործեն ընդդեմ բուրժուազիայի ... Բոլշևիկները այդ նախապատրաստեցին իրենց ողջ պրոպագանդայով-ագիտացիայով ... Սոցիալիզմի դավաճանները այդ առթիվ իրենց գլուխն ազատում էին բոլշևիկյան ագիտացիայով բանակը փայտայելու մասին ֆրազներ ասելով, բայց մենք պարծենում ենք նրանով, որ կատարել ենք մեր պարտքը՝ քայքայելով մեր դասակարգային թշնամու ուժերը, խլելով նրանից բանվորների և գյուղացիների զինված մասսաները՝ շահագործողների դեմ պայքարելու համար»⁴²:

Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի բոլշևիկները հավատարիմ մնալով Լենինի ցուցմունքներին, իրենց ամենօրյա գաղափարական բացատրական աշխատանքով համաձայնողական կուսակցություններից կարողացան նվաճել հեղափոխության հարվածային ուժը՝ բանակը:

В. К. ПЕЙРИЗЯН—Идеологическая работа большевистских организаций Армении в Кавказской армии (октябрь 1917—февраль 1918 г.).—В статье на основании архивных источников и материалов периодической печати освещается идеологическая работа большевистских организаций Армении среди солдат Кавказской армии, имевшая целью сплотить их вокруг большевиков и, опираясь на революционную армию, добиться установления Советской власти в Закавказье.

³⁹ «Կավկասյան օրաթի», 1917, № 230, 29 դեկտեմբերի, տե՛ս նաև Ս. Ի. Սեֆի նույն ժողովածուի էջ 355:

⁴⁰ «Կավկասյան օրաթի», 1917, № 230, 29 դեկտեմբերի:

⁴¹ Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 47—48:

⁴² Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 324—325: